



## EBT ՔԱՐՏԸ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գնումներ կատարելուց առաջ ստուգեք ձեր հաշվեկշիռը՝ նայելով ձեր վերջին ստացականին, զանգահարելով Հաճախորդների Սպասարկման Ծառայություն, 1-877-328-9677, անվճար, կամ այցելելով [www.ebt.ca.gov](http://www.ebt.ca.gov) կայքէջ: Այդ հաշվեկշիռը կլինի առավելագույնը, որը դուք կկարողանաք ծախսել ձեր քարտով:

**Քայլ 1** Ընտրեք ձեր նպարտեղներն և գնացեք վճարման գիծ: Կախված խանութից, հնարավոր է հարկավոր լինի, որպեսզի դուք առանձնացնեք ձեր թույլատրելի սննդի պարագաները անթույլատրելի պարագաներից: Հարցրեք վաճառորդին, որ նպաստներն եք դուք ցանկանում օգտագործել «սննդադրոշմը» կամ «կանխիկ դրամը»: Դուք կարող եք երկուսն էլ օգտագործել, բայց յուրաքանչյուր գործարքի համար դուք պետք է սահեցնեք ձեր քարտը վերջնասարքի միջով:

**Քայլ 2** Սահեցրեք ձեր քարտը վաճառակետային (POS) վերջնասարքի միջով կամ ձեր EBT Քարտը հանձնեք վաճառորդին:

**Քայլ 3** Մուտքագրեք ձեր չորս թվանշանանոց Անձնական Ինքնության Համարը (PIN) ստեղնաշարի վրա: Վերջնասարքը կցուցադրի \*\*\*\* ձեր մուտքագրած թվանշանների փոխարեն:

**Քայլ 4** Սեղմեք «ՄՈՒՏՔԱԳՐԵԼ» (ENTER) ստեղնը: Եթե դուք օգտագործում եք կանխիկ դրամի նպաստները և ցանկանում եք վերադիմ կանխիկ դրամ ստանալ, վաճառորդին ասացեք վերադիմ կանխիկ գումարը, որ ցանկանում եք ստանալ:

**Քայլ 5** Վաճառորդը կմուտքագրի սննդադրոշմի կամ կանխիկ դրամի նպաստի գումարը: Եթե գումարը ճիշտ է, սեղմեք «OK» կամ «ԱՅՈ» (YES) ստեղնը:

**Քայլ 6** Դուք կստանաք տպագիր ստացականի պատճենը յուրաքանչյուր գործառնության համար, որի վրա գրված կլինի՝

- Խանութի անվանումը և հասցեն
- Ձեր կատարած գնումի գումարը
- Ձեր նոր հաշվեկշիռները

**Քայլ 7** Քայլ 7 Պահպանեք ձեր ստացականը, որպեսզի հաջորդ անգամ գնում կատարելիս իմանաք ձեր հաշվեկշիռը:

Հիշե՛ք, որ ձեզանից ձեր սննդադրոշմի նպաստների օգտագործման համար վարձավճար չպետք է գանձվի, և դուք չեք կարող կանխիկ կամ վերադիմ դրամ ստանալ ձեր սննդադրոշմի նպաստի հաշվեկշիռից:

## ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՁԵՐ EBT ՔԱՐՏԸ ATM-ՈՒՄ

**Քայլ 1** Ձեր քարտը մտցրեք կամ սահեցրեք ATM սարքի միջով:

**Քայլ 2** Մուտքագրեք ձեր չորս թվանշանանոց Անձնական Ինքնության Համարը (PIN) ստեղնաշարի վրա և սեղմեք «OK» կամ «ՄՈՒՏՔԱԳՐԵԼ» (ENTER) ստեղնը: “ENTER” key.

**Քայլ 3** Ընտրեք «ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ՀԱՆՈՒՄ» (WITHDRAW CASH) և այնուհետև «ՍՏՈՒԳՈՒՄ» (CHECKING): (Որոշ ATM սարքեր հնարավոր է օգտագործեն տարբեր բառեր):

**Քայլ 4** Մուտքագրեք գումարը, որ ցանկանում եք հանել, դոլարային ամբողջական գումարով (օրինակ \$20, \$200 կամ որևէ այլ գումար): Տասանոց և քսանանոց թղթադրամերը սովորաբար փոքրագույն տարադրամերն են:

**Քայլ 5** ATM-ի էկրանին կհայտնվի մի ծանուցում, որը կներկայացնի վճարի չափը: Եթե ցանկանում եք ընդունել, սեղմեք «ՇԱՐՈՒՆԱԿԵԼ» (CONTINUE): Եթե չեք ցանկանում վճար կատարել, սեղմեք «ՉԵՂԱՐԿԵԼ» (CANCEL):

**Քայլ 6** ATM-ը կտա ձեզ ձեր կանխիկ դրամը և ստացականը: Ոչ բոլոր ATM սարքերը ցույց կտան ձեր հաշվեկշիռը ստացականի վրա:

**Քայլ 7** Պահպանեք ձեր ստացականը, որպեսզի իմանաք ձեր հաշվեկշիռը:

# ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՁԵՐ EBT ՔԱՐՏԸ ՔՕՏ ՎԵՐՋՆԱՍԱՐՔԻՑ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՍ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՍԱՐ

- Քայլ 1** Վաճառորդին հարցրեք, արդյո՞ք կարող եք տվյալ խանութում կանխիկ դրամ հանել, և արդյո՞ք դրա համար վարձավճար է գանձվում:
- Քայլ 2** Սահեցրեք ձեր քարտը վաճառակետային (POS) վերջնասարքի միջով կամ ձեր EBT Քարտը հանձնեք վաճառորդին:
- Քայլ 3** Մուտքագրեք ձեր չորս թվանշանանոց Անձնական Ինքնության Համարը (PIN) ստեղնաշարի վրա: Վերջնասարքը կցուցադրի \*\*\*\* ձեր մուտքագրած թվանշանների փոխարեն:
- Քայլ 4** Սեղմեք «ՄՈՒՏՔԱԳՐԵԼ» (ENTER) ստեղնը:
- Քայլ 5** Վաճառորդին տեղեկացրեք, թե որքան կանխիկ դրամ եք ցանկանում ստանալ:
- Քայլ 6** Վաճառորդը կմուտքագրի ձեր հաշվից հանվելիք կանխիկ դրամի նպաստների գումարը: Եթե գումարը ճիշտ է, սեղմեք «OK» կամ «ԱՅՈ» (YES) ստեղնը:
- Քայլ 7** Դուք կստանաք տպագրի ստացականի պատճենը, որի վրա գրված կլինի
  - Խանութի անվանումը և հասցեն
  - Ձեր կանխիկ դրամի հանման գումարը
  - Ձեր կանխիկ դրամի նոր հաշվեկշիռը
- Քայլ 8** Պահպանեք ձեր ստացականը, որպեսզի իմանաք ձեր հաշվեկշիռը:

## ԻՆՉՊԵՍ ՍՏՈՒԳԵԼ ՁԵՐ EBT ՔԱՐՏԻ ՀԱՇՎԵԿՇԻՐԸ

Ձեր նոր հաշվեկշիռը տպվում է ձեր նոր ստացականի վրա: **Միշտ պահպանեք ձեր ստացականները:** Եթե դուք կորցրել եք ձեր վերջին ստացականը, դուք կարող եք զանգահարել Հաճախորդների Սպասարկման Ծառայություն, ստուգել ձեր հաշվեկշիռը ATM կամ POS վերջնասարքի միջոցով կամ այցելելով [www.ebt.ca.gov](http://www.ebt.ca.gov) կայքէջ: ATM-ի միջոցով ձեր հաշվեկշիռը ստուգելու համար ձեզնից կգանձվի 25 ցենտ:

Եթե դուք երբևէ կորցնեք ձեր քարտը կամ այն գողացվի, անմիջապես զանգահարեք Հաճախորդների Սպասարկման Ծառայություն 1-877-328-9677 հեռախոսահամարով: Նրանք կտեղեկացնեն ձեզ ինչպես նոր քարտ ստանալ: Եթե դուք չեք հայտնում ձեր քարտի կորստի կամ դրա գողացված լինելու մասին, ապա որևէ մեկ այլ անձ կարող է օգտագործել ձեր քարտը ծախսելու համար ձեր բոլոր նպաստները, և այդ նպաստները չեն փոխհատուցվի:

## ԶԱՆԳԱՀԱՐԵՔ ՀԱՃԱՄՈՐԴՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՎՃԱՐ, ԵԹԵ՝

- Ձեր քարտը կորել կամ գողացվել է:
- Ձեր քարտը չի աշխատում:
- Դուք ցանկանում եք փոխել ձեր PIN-ը, քանի որ մոռացել եք այն, կամ եթե մեկ ուրիշն էլ գիտի ձեր PIN-ը: Ձեր հանրային օգնության գրասենյակը նույնպես կարող է օգնել ձեզ փոխելու ձեր PIN-ը:
- Դուք ցանկանում եք իմանալ՝ որքան գումար է մնացել ձեր հաշիվներում:
- Ձեզանից գումար է գանձվել գնում կատարելու համար, բայց դուք չեք ստացել ապրանքները, կամ ձեզանից չափից շատ գումար է գանձվել գնվածի դիմաց:
- Դուք այլ հարցեր կամ խնդիրներ ունեք:

**Օրը 24 ժամ / շաբաթը 7 օր**  
**1-877-328-9677**  
**TTY: 1-800-735-2929**

Ստուգեցեք ձեր EBT Ուսուցման Գրքույկում ներկայացված ժամանակացույցով և մուտքագրեք այն օրերը, երբ նպաստները կնստեն ձեր հաշվին՝

---

ԲՄննդադրոշմի նպաստներ (Ամսվա 1-ից մինչև 10-րդ օրը)

---

Կանխիկ դրամի նպաստներ (Ամսվա 1-ին, 2-րդ կամ 3-րդ օրը)

USDA is an equal opportunity provider and employer.

STATE OF CALIFORNIA  
HEALTH AND HUMAN SERVICES AGENCY  
DEPARTMENT OF SOCIAL SERVICES

